

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից սեպտեմբերի 5-ի նիստում քննարկված «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

| | Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը) | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|----|--|---|--|---|--|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Պատգամավոր Հրայր Թովմասյան | «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի 1-ին հոդված | Առաջարկվում է սահմանել գործուն մեխանիզմ, որի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը տեղեկություն կստանա գյուղատնտեսական հողի սեփականատեր հանդիսացող անձի՝ քաղաքացիությունը կորցնելու մասին: | Ընդունվել է: Համապատասխան մեխանիզմներ սահմանվել են «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության | Ընդունվել է |

| | | | | | |
|----|-----------------------------------|--|---|---|-------------|
| | | | | օրենքում լրացում կատարելու մասին» «« օրենքների նախագծերով: | |
| 2. | Պատգամավոր Հրայր Թովմասյան | «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հոդված 1 | 3. Համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացիներին, իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերից դրանց սեփականատերերի հրաժարվելու կամ սույն օրենսգրքի 102-րդ հոդվածով ի 1-8-րդ և 9-րդ կետերով սահմանված հիմքերով հողամասի նկատմամբ իրավունքը դադարելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 102-րդ հոդվածի 8.1-րդ կետով սահմանված դեպքում՝ եթե հողամասն հարկադիր կարգով չի օտարվել երրորդ անձանց և նախկին սեփականատիրոջը հատուցվել է հողի արժեքը, այդ հողամասերն օրենսդրությամբ սահմանված կարգով անցնում են համայնքների սեփականությանը: | Ընդունվել է: | Ընդունվել է |

| | | | | | |
|----|---|---|---|---------------------|-------------|
| 3. | Պատգամավոր Ռուստամ Մախմուդյան | «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Նոր հոդված | ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր՝ 3-րդ պարբերությամբ հետևյալ շարադրանքով. 3.Տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման, հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման և սպասարկման համար հողամասերի վրա չի տարածվում սույն հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված սահմանափակումը: | Ընդունվել է: | Ընդունվել է |
| 4. | Պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան, Շուշան Սարգսյան, Ռուստամ Մախմուդյան | «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Վերնագիրը, Հոդված 1, 1-ին մաս | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի | Ընդունվել է: | Ընդունվել է |

| | | | | | |
|----|--------------------------------------|--|---|---------------------|-------------|
| | | | <p>282-րդ հոդվածը՝</p> <p>1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով. «1.1. Այն դեպքում, երբ սեփականության իրավունքի ձեռքբերումը պայմանավորված է եղել օրենքով նախատեսված պայմանների առկայությամբ, և սեփականության իրավունքի ծագումից հետո վերացել են սեփականության իրավունքի ձեռքբերման համար հիմք հանդիսացած պայմանները, ապա սեփականատերը այդ գույքը պետք է օտարի նշված պայմանների դադարման պահից մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով»:» 1-ին մասում «ծագման պահից» բառերը փոխարինել «դադարման հիմքի առաջացման պահից» բառերով:</p> | | |
| 5. | Պատգամավոր Ռուստամ Մախմուդյան | «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու | <p>2) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Այն դեպքերում, երբ սեփականատերը սույն հոդվածի 1-ին և 1.1-ին կետում նշված</p> | Ընդունվել է: | Ընդունվել է |

| | | | | | |
|----|--------------------------------------|--|---|---------------------|-------------|
| | | մասին», Հոդված 1, 2-րդ մաս | ժամկետում գույքը չի օտարում, նման գույքը՝ դրա բնույթի եւ նշանակության հաշվառմամբ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի դիմումի հիման վրա կայացված դատարանի վճռով, վաճառվում է հարկադիր կարգով եւ ստացված գումարը հանձնվում է նախկին սեփականատիրոջը կամ վերածվում է պետական կամ համայնքային սեփականության, իսկ նախկին սեփականատիրոջը հատուցվում է գույքի արժեքը:»: | | |
| 6. | Պատգամավոր Ռուստամ Մախմուդյան | «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», Հոդված 1 | ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. Հոդված 282. Անձի սեփականության իրավունքի դադարումը կամ կորուստը այն գույքի նկատմամբ, որը չի կարող նրան պատկանել 2.Այն դեպքերում, երբ սեփականատերը սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետում գույքը չի օտարում, կամ նման գույքը՝ դրա բնույթի և | Ընդունվել է: | Ընդունվել է |

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | <p>նշանակության հաշվառմամբ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի դիմումի հիման վրա կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով, վաճառվում է հարկադիր կարգով և ստացված գումարը հանձնվում է նախկին սեփականատիրոջը կամ վերաձվում է պետական կամ համայնքային, իսկ նախկին սեփականատիրոջը հատուցվում է գույքի արժեքը: Այդ դեպքում հանվում են գույքն օտարելու ծախսերը:</p> <p>Նկատի ունենալով, որ ՀՀ քաղ. օր-ի 282-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության նոր խմբագրության շարադրանքում ավելացվում է նաև տեղական ինքնակառավարման մարմիններ>> բառերը, ուստի առաջարկվում է նույն նախադասության մեջ <<վերաձվում է պետական>> բառերից հետո ավելացնել <<կամ համայնքային>> բառերը, քանի որ համայնքի ղեկավարի</p> | | |
|--|--|--|--|--|

| | | | | | |
|----|---|--|--|---|---------------------|
| | | | <p>հայցադիմումի հիման վրա օտարված գույքը դառնալու է համայնքային սեփականություն: Եվ վերջապես, նույն հողվածի քննարկվող մասում, իհարկե նախկին խմբագրությամբ էլ է դա եղել, առաջարկվում է <<վրա>> բառից հետո <<կայացված>> բառի փոխարեն ավելացնել <<դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով>> բառերը, հաշվի առնելով, որ դատական ակտերը ենթակա են պարտադիր կատարման դրանք օրինական ուժի մեջ մտնելուց հետո միայն:</p> | | |
| 7. | Պատգամավոր Վարդևան Գրիգորյան | <p>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», Հոդված 1, 2-րդ մաս</p> | <p>Նախագծի 1-ին հողվածի 2-րդ կետի «արժեքը» բառից հետո ավելացնել.«Ընդ որում դատարանը հողամասի հարկադիր կարգով վաճառքի կամ պետական կամ համայնքային սեփականության վերածվելու հարցը վճռելիս հաշվի է առնում նախկին սեփականատիրոջ ցանկությունը:» նախադասությունը:</p> | <p>Չի ընդունվել: Սեփականատիրոջը հնարավորություն է տրված 1 տարվա ընթացքում օտարել իրեն պատկանող գույքը: Նշված ժամկետում չօտարելու դեպքում գույքի ճակատագիրը որոշվում է համայնքի</p> | <p>Չի ընդունվել</p> |

| | | | | | |
|----|-------------------------------------|--|--|--|--------------------|
| | | | | ղեկավարի դիմումի հիման վրա՝ դատարանի վճռով: | |
| 8. | Պատգամավոր Վարդևան Գրիգորյան | «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, Հոդված 1 | Նախագծի հոդված 1-ով առաջարկվող պարբերության «պահանջով» բառից հետո ավելացնել՝ «Ընդ որում այն հողամասերի մասով, որոնց նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարման հիմքերը առաջացել են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, հայցադիմում կարող է ներկայացվել դատարան սույն օրենքը ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո»: | Ընդունվել է մասնակի: Փոփոխությունը կատարվել է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում: | Ընդունվել է մասամբ |
| 9. | Պատգամավոր Վարդևան Գրիգորյան | «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հոդված 1 | Նախագծի հոդված 1-ով առաջարկվող պարբերության «պահանջով» բառից հետո ավելացնել՝ «Ընդ որում այն հողամասերի մասով, որոնց նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարման հիմքերը առաջացել են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, հայցադիմում կարող է ներկայացվել դատարան սույն օրենքը ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո»: | Չի ընդունվել: Սեփականատիրոջը հնարավորություն է տրված 1 տարվա ընթացքում օտարել իրեն պատկանող գույքը: Նշված ժամկետում չօտարելու դեպքում գույքի ճակատագիրը որոշվում է | Չի ընդունվել |

| | | | | | |
|--|--|--|--|---|--|
| | | | | համայնքի ղեկավարի դիմումի հիման վրա՝ դատարանի վճռով: | |
|--|--|--|--|---|--|